Մրցույթի հրավեր

Հենանշման միջոցով ՀՀ համայնքների կողմից ծառայությունների և գործառույթների ինքնագնահատման էլեկտրոնային գործիքի/առցանց հարթակի ստեղծման նպատակով

Երևան **11-ը նոյեմբերի, 2020թ**

Առաջադրանքի համատեքստը

«Ուրբան» հիմնադրամը ՀՀ 10 փորձնական համայնքներում իրականացնում է **«Սովորել՝ համեմատելով»** ծրագիրը, որի նպատակն է ՏԻՄ-երում ձևավորել կարողություններ՝ մատուցվող ծառայությունների և գործառույթների կատարողականը **ինքնագնահատելու** համար: Դիտարկման համար ընտրվել են 4 լիազորություններ՝ աղբահանություն, նախադպրոցական կրթություն, քաղաքացիների մասնակցություն և սոցիալական ծառայություններ, նկարագրվել ու մշակվել են ցուցիչներ՝ դրանցից յուրաքանչյուրի գնահատման համար: Համայնքները հավաքում և լրացնում են թվային տվյալներ յուրաքանչյուր ցուցիչի վերաբերյալ, որոնք հետո վերլուծվում և վիզուալիզացվում են:

Ընտրված գործառույթների վերաբերյալ համայնքներից հավաքագրած ու վերլուծված տվյալները չեն ծառայում որպես վերադաս կամ լիազոր մարմինների կողմից վերահսկողություն կամ ստուգում իրականացնելու միջոց, այլ օգնում են ՏԻՄ-ին՝ կայացնելու տվյալների վրա հիմնված որակյալ կառավարչական որոշումներ: Այդուհանդերձ, Հենանշման կարևոր բաղադիրչ է գործընկեր համայնքների միջև տվյալների փոխանակումը և քննարկումները, որոնց նպատակն է համեմատելով ցուցիչների արդյունքները, ծանոթանալ գործընկեր համայնքների դրական գործելակերպին՝ հետագայում դրանցից դասեր քաղելու և կատարողականը (և տվյալները) բարելավելու նպատակով:

Փորձնական այս փուլում գործիքը դեռևս կիրառվում է համայնքների համար, սակայն «Ուրբան» հիմնադրամը ակնկալում է հաջողակ դիմորդից ստանալ ունիվերսալ գործիք/հարթակ, որը բացի ՏԻՄ-երից հնարավորություն կտա նաև այլ կազմերպություններին և հաստատություններին (օրինակ՝ հասարակական կազմակերպություններին, ջրօգտագործողների ընկերություններին, համատիրություններին և այլն) ևս իրականացնել ինքնագնահատում և բարելավել իրենց աշխատանքների որակն ու արդյունավետությունը:

Առաջադրանքի նպատակը և պահանջները

Սույն առաջադրանքի նպատակն է ստեղծել էլեկտրոնային գործիք, առցանց հարթակ՝ տվյալների ներմուծումը, պահպանումը, վերլուծումը և ներկայացմումը դյուրացնելու համար: Գործիքից օգտվող ՏԻՄ-երը իրենց անհատական հաշվով մուտք կգործեն համակարգ և

կլրացնեն տարվա տվյալները՝ մուտքագրման ընթացքը պահպանելու հնարավորությամբ: Մուտքագրումն ավարտելուց հետո, ամփոփ տվյալները տեսանելի կլինեն գործիքի «հանրային» բաց տիրույթում:

«Ուրբան» հիմնադրամը ակնկալում է հաջողակ դիմորդից ստանալ ունիվերսալ գործիք/հարթակ, որը բացի ՏԻՄ-երից հնարավորություն կտա նաև այլ կազմերպություններին և հաստատություններին ևս իրականացնել ինքնագնահատում:

Մասնավորպես, գործիքը (հարթակը) պետք է ապահովի հետևյալ գործառույթները.

ա/ Տվյալների ներմուծման մասով՝

- Յուրաքանչյուր ծառայության/գործառույթի վերաբերյալ ցուցիչների ցանկի հիման վրա տվյալների մուտքագրման, պահպանման և վերարտադրման հնարավորություն
- Մուտքագրված տվյալների վերլուծություն, գրաֆիկների, չարտերի, վիզուալ այլ միջոցներով ներկայացում
- Ապագայում նոր գործառույթներ և դրանց համապատասխան ցուցիչների ցանկեր ավելացնելու տեխնիկական հնարավորություն:
- Նոր ՏԻՄ-եր համակարգի մեջ ավելացնելու հնարավորություն:
- ՏԻՄ-երից բացի, նոր կազմակերպություններ, հաստատություններ ավելացնելու հնարավորություն:
- Առկա այլ ինֆորմացիոն համակարգերին ինտեգրելու հնարավություն:

բ/ Տարբեր ՏԻՄ-երի տվյալների հավաքական ներկայացման մասով՝

- Տվյալ ժամանակաշրջանում (ֆինանսական տարում) միևնույն գործառույթի շրջանակներում համակարգում գրանցված բոլոր ՏԻՄ-երի տվյալների համեմատում:
- Միջինացված արդյունքի դուրսբերում:
- Տվյալ (յուրաքանչյուր) ՏԻՄ-ի՝ բոլոր տարիների ներմուծած տվյալների, արդյունքների համեմատություն:
- ՏԻՄ-ի տվյալ գործառույթի արդյունքի համեմատություն ընդհանուր միջինացված արդյունքի հետ:
- ՏԻՄ-ից բացի, այլ ավելացված այլ կազմակերպությունների, հաստատությունների կողմից ներմուծված արդյունքների համեմատություն:
- Հարթակի բջջային հավելվածի ստեղծում պարբերաբար թարմացումների դեմո հնարավորությամբ:

գ/ Կրթական-տեղեկատվական հարթակ ձևավորելու մասով (bench-learning)՝

- Ինչ է հենանշման մեթոդը, ինչու է այն հարմար կիրառելու համար, ինչ օգուտներ կարող է տալ:
- Փորձի փոխանակման ու քննարկման հարթակ:
- Օգնություն սկսնակներին (ինչից սկսել և ինչպես իրականացնել հենանշում):
- Առցանց դասընթացի հնրարավորություն:

Էլեկտրոնային գործիքի դիզայնը պետք է լինի պարզ, հարմար օգտագործողների համար: Այն պետք է հնարավորություն ունենա ինտեգրվելու ՀՀ ՏԿԵ նախարարության կողմից կիրառվող էլեկտրոնային կառավարման գործիքների շարքին, մասնավորպես համայնքների համայնքների տեղեկատվում:

Պահանջվող որակավորումները

- Ծրագրավորման կայքեր, հավելվածներ ստեղծելու փորձ
- Տեղական ինքակառավարման համակարգին, հասարակական կազմակերպությունների սեկտորին ծանոթ լինելը կհամարվի առավելություն

Հետաքրքրություն հայտնող ընկերությունները կամ անհատները պետք է ներկայացնեն իրենց պատկերացումը՝ տեխնիկական և դիզայներական լուծումների վերաբերալ, ինչպես նաև գնային առաջարկ:

Պահանջվող արդյունքները

- Հենանշման առցանց հարթակ (ինտերնետ և ինտրանետ)՝ ներառյալ ելակետային կոդը (source code)
- Առցանց հարթակից օգտվելու ձեռնարկ և դասընթաց

Առաջադրանքի տևողություն

Առաջադրանքը պետք է իրականացվի պայմանագրի կնքման պահից մոտ 4 ամսվա ընթացքում:

Առաջադրանքի մեկնարկը՝ **նոյեմբերի 20, 2020թ**:

Ժամանակացույց

N	Գործողություն	Իրականացման ժամանակահատված
1.	Առաջադրանքի մեկնարկը	Նոյեմբեր 20-ին, 2020թ
2.	Հենանշման հարթակի գաղափարի, ինտերֆեյսի, կառուցվածքի ներկայացում, քննարկում «Ուրբան» հիմնադրամի հետ, վերջնականացում	Մինչև դեկտեմբերի 20-ը, 2020թ
3.	Հենանշման հարթակի պատրաստում, նախագծի քննարկում «Ուրբան» հիմնադրամի հետ	Մինչև հունվարի 31-ը, 2021թ
4.	Հենանշման հարթակի լրամշակում, փորձարկում, վերջնական տարբերակ, գործարկում	Մինչև փետրվարի 15-ը, 2021թ
5.	Հարթակից օգտվելու ձեռնարկի պատրաստում	Մինչև մարտի 5-ը, 2021թ
6.	Գործընկեր համայնքների վերապատրաստում	Մինչև մարտի 31-ը, 2021թ

Իրավասություն

Մրցույթին իրավասու են մասնակցել և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձինք, որոնք բավարարվում են պահանջվող որակավորմանը և փորձին:

Դիմումների ընթացակարգեր

Հետաքրքրված դիմորդները պետք է ներկայացնեն տեխնիկական և ֆինանսական հայտեր:

<u>Տեխնիկական հայտը պետք է ներառի.</u>

- Ինքնակենսագրություն՝ համապատասխան որակավորումներով: Հայտատուն պետք է ունենա ՏՏ առնվազն վեբ-ծրագրավորման նվազագույնը 3 տարվա փորձ:
- Դիմորդի նախկին փորձի նկարագրություն, նմանօրինակ փորձի/ծրագրերի ցանկ, որոնք իրականացվել են վերջին 5 տարիների ընթացքում, ներառյալ ֆինանսավորող կազմակերպության ներկայացուցչի կոնտակտային տվյալներ և ծրագրավորած կայքերի հղումներ:
- Իրավաբանական անձինք պետք է ներկայացնեն պետական գրանցման փաստաթղթերի պատճեներ:

<u>Ֆինանսական հայտը</u> պետք է ներառի բյուջեի հաշվարկ և հիմնավորում՝ ըստ առաջադրանքի վերոնշյալ կոմպոնենտների (առավելագույնը 1 էջ):

<u>Հայտերի գնահատումը</u>

Տեխնիկական հայտը կազմում է գնահատման 80%

- Համապատասխան մասնագիտական որակավրումներ 30%
- Նմանօրինակ առաջադրանքների իրականացման փորձ 50%

Ֆինանսական հայտը կազմում է գնահատման 20%:

Ֆինանսական հայտը չպետք է գերազանցի **3.000.000 ՀՀ դրամը:**

Հետաքրքրված դիմորդները պահանջվող փաստաթղթերը պետք է ուղարկեն info@urbanfoundation.am հասցեին մինչև **ս.թ.նոյեմբերի 16-ը**՝ թեմայի տողում նշելով **«Վեբ-ծրագրավորող-Հենանշում»:**